ՎԱՐԴԱՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Միության փլուզման պահից Հարավային Կովկասի երկրները հայտնվեցին քաղաքական, տնտեսական և սոցիալական նոր մարտահրավերների առջև: Որպես այդպիսի մարտահրավերներ՝ հատկապես ընդգծվում են կոռուպցիայի դեմ պայքարը, պետական ինստիտուտների, արտաքին և ներքին անվտանգության ամրապնդումը, ազատ, մրցակցային շուկայական հարաբերությունների միջոցով կայուն, զարգացող տնտեսական համակարգի կազմավորումը և այլն: Թվում է, թե այս խնդիրները պետք է միայն համարել երկրներից յուրաքանչյուրի ներքին գործերին առնչվող հիմնահարցեր: Սակայն դրանց լուծումները կարելի է գտնել նաև տարածաշրջանային համագործակցային միջոցով, որը հնարավորություն կտա երկրներին գլոբալ խնդիրների դեմ պայքարել միացյալ ուժերով: Բացի այդ, Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության կայացումը կարող է իրական հնարավորություններ ստեղծել անցյալի ծանր բեռից ազատվելու և սոցիալ-քաղաքական նոր պահանջմունքները բավարարելու համար: Սակայն հարկ է նշել, որ այս հեռանկարները նույնպես մշուշոտ են թվում, քանի որ առկա են դրան խոչընդոտող բազմաթիվ խնդիրներ՝ համատարած էթնիկ թշնամական հակամարտություններ, թույլ տնտեսություններ, կոռուպցիոն ռիսկեր, պետությունների անհամատեղելի դիրքորոշումներ և այլն: Եթե այս ամենին գումարենք նաև այն, որ վերջերս լայն շրջանառության մեջ մտած առկա ստատուս-քվոյի վերափոխումը անվտանգության, կայունության և զարգացման երկարաժամկետ տարածաշրջանի մասին մտորումները նույնպես լուրջ դժվարությունների են հանդիպում, ապա ընդհանուր պատկերը, իրոք, ոգևորող չէ:

Այսպիսի պայմաններում եվրոպականացումը թվում է՝ այն «հարթակն է», որի օգնությամբ հարավկովկասյան երկրները կարող են կառուցել գոնե փոքրածավալ ռեգիոնալացում, քանի որ դրա բացակայությամբ անհնարին է դառնում պատկերացնել, թե ինչպես են լուծվելու ներտարածաշրջանային խնդիրները: Հետևաբար, եվրոպականացման հաջող փորձաշրջան անցնելը կարող է հզոր ազդակ դառնալ անցում կատարելու «ոչ պատերազմ - ոչ խաղաղություն» վիճակից երկարատև կայուն զարգացման վիճակի :

Այս առումով ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ տարածաշրջանային համագործակցություն կառուցելու կոչեր գալիս են ոչ միայն Եվրոպայից, այլ նաև ներտարածաշրջանային գիտավերլուծական շրջանակների կողմից: Այսպես, Դիտրիխ Շպեռլինգը նշում է, որ եվրոպականացման գործընթացին մասնակցությունը հնարավորություն է տալիս կառուցել վստահություն համագործակցության որոշակի տիպի նկատմամբ, որը պետք է ձգտի լուծել ընդհանուր պրոբլեմները «շահում-շահում-շահում» (win/win/win) բանաձևին համապատասխան, երբ ամեն մի ընդհանուր գործողություն շահեկան է դառնում բոլորի համար: Իսկ «խաղ զրոյական արդյունքով» խաղով կողմնորոշվելը, որում մի կողմի շահումն ենթադրում է մյուսի պարտությունը, չի կարող օգտակար լինել: Եթե դիտարկենք Հարավային Կովկասի ներկայիս վիճակը, ապա պետք է փաստենք, որ այստեղ բացակայում է ռեգիոնալացման որևէ տեսակ, որը կներառեր տարածաշրջանի բոլոր երեք երկրները միաժամանակ: Փոխարենը Հարավային Կովկասը բզկտվում է ներտարածաշրջանային հակամարտություններից, որոնք մանիպուլացվում, օգտագործվում են արտատարածաշրջանային ուժերի կողմից:

Ռուսաստանն ու ԱՄՆ ցանկանում են միակողմանիորեն վերահսկել Հարավային Կովկասը՝ հատկապես էներգետիկ ռեսուրսների, տարածաշրջանով անցնող գազա- և նավթամուղերի առկայությամբ պայմանավորված: Սակայն նրանք ուզում են վերահսկել այն միակողմանիորեն՝ ոչ միասին: Այսպիսով, ունենալով իրար բախվող շահեր, նրանք կարող են և իրականում իրենց ձեռքին գործիք են դարձնում առկա հակամարտությունները:

Ներկայիս Հարավային Կովկասում, ըստ էության, միայն Հայաստանն է, որ չունի ռեգիոնալացման որևէ տեսակի հնարավորություն՝ ունենալով փակ սահմաններ Թուրքիայի և Ադրբեջանի հետ և անկայուն հարաբերություններ Վրաստանի հետ: Այսպիսի պայմաններում հայ պատվիրակները սովորաբար եվրոպական կառույցների աշխատանքներին իրենց պարբերաբար մասնակցությունը ցուցաբերելուց հետո հայրենիք են վերադառնում՝ մտքում ունենալով իրենց եվրոպացի գործընկերներից լսած մոտավորապես հետևյալ խորհուրդը. "եթե միմյանց հարևան տարածքներն ի վիճակի չեն համագործակցել, ապա նրանց համար չի լինի ԵՄ տանող ճանապարհ": Բնականաբար, առաջանում է "ինչ անեն" հարցը: Ցանկացած պատասխան շեշտը դնում է Հարավային Կովկասի ներսում "փոքրածավալ ռեգիոնալացման" ուղղությամբ տարվող ջանքերի բազմապատկման վրա:

Իտալիայում և Իսպանիայում Հայաստանի Հանրապետության նախկին արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանն առանձնացնում է Հարա-

վային Կովկասում եվրոպականացման երկու էական փուլ: Ըստ նրա՝ տարածաշրջանում տեղի են ունեցել լուրջ գործընթացային փոփոխություններ: Առաջին և ամենակարևոր վերակերպումն այն է, որ ժամանակին "Անդրկովկաս" եզրույթը վերափոխվել է Հարավային Կովկասի: Այսօր ռուսական կապերի հետ մեկտեղ տարածաշրջանն ունի պարզ, տեսանելի իրանական կապ, թուրքական չափելիություն, ինչպես նաև վերտարածաշրջանային հարաբերություններ ԱՄՆ, ԵՄ և Մեծ Մերձավոր Արևելքի հետ: Եթե տարածաշրջանային կապերը բնութագրելու համար օգտագործենք վերջերս շրջանառության մեջ մտած ծովային տերմինաբանությունը, ապա կարող ենք խոսել Կասպից, Սև և հստակ ձևավորված տրանսատլանտյան կապերի մասին: Սա Հարավային Կովկասի եվրոպականացման առաջին փուլն է, երբ դեռ շատ վաղ է խոսել նրա տարածաշրջանային ինքնության մասին: Ըստ հեղինակի՝ անկախություն ստանալուց հետո տարածաշրջանի պետությունները հետզհետե դուրս են եկել ռուսական վերահսկողության դաշտից (բացառությամբ Հայաստանի)՝ միաժամանակ խորացնելով կապերն այլ հարևան երկրների ու արտատարածաշրջանային կազմակերպությունների հետ:

Եվրոպականացման երկրորդ փուլը Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միացյալ ինտեգրման գործընթացն է եվրոպական և եվրոատլանտյան ճարտարապետության մեջ: Չնայած այն հանգամանքին, որ Վրաստանը փորձում է եվրոատլանտյան հարաբերություններում Հարավային Կովկասի երկրներից առաջամարտիկը համարվել (պետք է նշել, որ իսկապես այդ ուղղությամբ տարված աշխատանքներում այս երկիրը հաջողություններ գրանցել է), այնուամենայնիվ, հատկապես Արևելյան գործընկերության մեկնարկով Վրաստանը գրկվում է տարածաշրջանում այդ առումով առաջատար դիրքերից, քանի որ ԱԳ վերստին հաստատվում են ԵՄ տարածաշրջանային մոտեցումները, և առաջարկները, որոնք կներկայացվեն, երեք երկրների համար էլ նույնը կլինեն: Սա, ըստ էության, նշանակում է, որ վերջ կտրվի տարածաշրջանում Ուկրաինայի կարգավիճակին հավասարվելու Վրաստանի հավակնություններին:

Եվրոպականացման այս երկրորդ փուլը ներկայումս ընթացքի մեջ է, քանի որ պետությունները գրեթե միաժամանակ դարձել են ԵԱՀԿ և ԵՏ անդամներ, բոլորի համար էլ գործում են ԵՄ հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը, եվրոպական հարևանության քաղաքականությունը և վերջերս մեկնարկած Արևելյան գործընկերությունը: Սակայն այս փուլում ևս խոսել Հարավային Կովկասի՝ որպես տարածաշրջանային ինքնության մասին, դեռևս վաղ է, իսկ երբեմն էլ ընդհանրապես հարցականի տակ է դրվում

տարածաշրջանի՝ որպես աշխարհաքաղաքական ձևավորված ամբողջության գոյության հարցը: Կա արդյոք տարածաշրջանե, - հարց է տալիս Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ի. Խաչիդրավան: Սա ամենևին էլ պատահական հարց չէ, քանի որ ԵՄ կցանկանար Հարավային Կովկասը տեսնել որպես միասնական տարածաշրջան և որդեգրել համալիր մոտեցում: Հարավային Կովկասը լի է սառեցված էթնիկական հակամարտություններով, իսկ դա նշանակում է սառեցված տարածաշրջանային ինքնություն: Այսինքն, ԵՄ և մյուս եվրոպական կառույցները Հարավային Կովկասում մեծ աշխատանք ունեն կատարելու՝ ստիպել, համոզել, խրախուսել երկրներին սկսել ներտարածաշրջանային տնտեսական ինտեգրում, անցնել տարածաշրջանային համագործակցության, որը հիմնված կլինի, այսպես կոչված, «փափուկ» (soft) անվտանգության ծրագրերի վրա (համագործակցություն մաքսային ոլորտում, պայքար կազմակերպված հանցավորության, փողերի լվացման և մարդկանց թրֆիկինգի դեմ):

Սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ձևավորվեց լիովին նոր աշխարհաքաղաքական իրողություն, ինչն անհրաժեշտություն և պայմաններ ստեղծեց միջազգային ահաբեկչության դեմ պայքարի տարածաշրջանային համագործակցության համար: Այսպիսի համագործակցությունն անհնարին կլիներ պատկերացնել, եթե հարավկովկասյան հակամարտություններն այժմ ռազմական գործողությունների փուլում գտնվեին: Ինչպես հայտնի է, այդ հակամրտություններից Արցախի պարագայում գործում է ԵԱՀԿ միջնորդական առաքելությունը, որը երկար տարիներ է՝ փորձում է իրար մոտեցնել կողմերի դիրքորոշումները: Եվ առկա «ոչ պատերազմ - ոչ խաղաղություն» վիճակը ևս պետք է համարել հաջողություն, որի պահպանման գործում մեծ դեր ունի նաև ԵԱՀԿ: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ակտիվորեն աջակցել, ոչ թե փոխարինել այդ միջազգային միջնորդական առաքելությունը՝ վերջինիս օգնելով հակամրտության խաղաղ, դիվանագիտական ճանապարհով լուծում գտնելու հարցում: Սակայն գործընթացին խանգարողը հենց տարածաշրջանի ներսից է՝ Ադրբեջանը, որ ջանքեր չի խնայում Արցախյան հակամարտության ԵԱՀԿ միջնորդական առաքելությունը փոխարինել ՄԱԿ միջնորդությամբ, ինչն ավելի կերկարածգի խնդրի կարգավորումը և, ընդհանրապես, արդյունավետ հանգուցալուծումը խիստ հարցականի տակ կդրվի:

Խնդիրը՝ տարածաշրջանային ինտեգրում և համագործակցություն, սակայն, ամենևին էլ հեշտ չէ, որովհետև Հարավային Կովկասի պետություններն ունեն բոլորովին տարբեր պատմամշակութային անցյալ, ներքին կազմակերպվածություն, տարբեր արտաքին կողմնորոշումներ, ինչը, բնականաբար, դժվա-

րեցնում է հետագա առաջխաղացման ու զարգացման գործընթացը միևնույն չափանիշներով: Որոշ վերլուծաբաններ Հարավային Կովկասի երկրներից առանձնացնում են Հայաստանը, որի իր արժեհամակարգով առավել մոտ է Եվրոպային: Այսպես, որպես ազգ, որը բնակվում է ոչ միայն Հայաստանում, այլ սփռված է ամբողջ աշխարհում, ՀՀ դիտարկում է իր Սփյուռքը՝ որպես ինտեգրման մի հզոր շարժիչ և արդյունավետ եվրոպականացման միջոց, որն առկա չէ Հարավային Կովկասի մնացած մասում: Դա լրացվում է նաև լեզվի գործոնով. հայերենը միակն է հնդեվրոպական լեզվաընտանիքից այս տարածաշրջանում:

Եվրոպայի միավորման ժամանակ չափազանց մեծ դեր է խաղացել երկրների միևնույն պատմամշակութային անցյալը և շուկայական տնտեսության զարգացվածության բարձր ու գրեթե իրար հավասար մակարդակը: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ Եվրոպայի հետ ունենալով այս կամ այն չափի պատմամշակութային կապեր, հարավկովկասյան երկրներին մնացել է թռիչքային տեմպերով զարգացնել տնտեսությունները, որպեսզի եվրոպական ընտանիքի լիարժեք մաս համարվեն: Խնդիրը շատ ավելի խորքային է, այն հանրային գիտակցության մեջ է: Նախ ՀՀ, Վրաստանի ու Ադրբեջանի քաղաքացիները պետք է ցանկանան համարվել այդ ընտանիքի բաղկացուցիչ մասը: Չնայած այն հանգամանքին, որ Եվրոպացի դիվանագետները բազմիցս հայտարարել են, որ հարավկովկասյան երկրների՝ ԵՄ հնարավոր անդամակցությունը մեծապես կախված է այդ երկրների ժողովուրդների կամքից, այնուամենայնիվ, այդ խնդիրն ավելի փոքր չափով է կախված մեզանից, այն հիմնական չափով կապված է ԵՄ առաջատար պետությունների աշխարհաքաղաքական շահերի հարաբերակցությունից: Ռ.Շուգարյանի կարծիքով, Հարավային Կովկասի եվրոպականացման երկրորդ փուլում ձևավորվում է "անցումային տարածաշրջանային ինքնություն", ինչը և թույլ է տալիս կիսել միասնական ընդհանուր նպատակներ:

Եվրոպականացումը, նախևառաջ, պետք է լինի գիտակցված գործընթաց, ինչը նախադրյալներ և հնարավորություն կստեղծի գործընթացն ավելի խորացնելու՝ ինտեգրվելու համար: Սակայն այս գործընթացի սուբյեկտները պետք է պահպանեն իրենց ազգային ինքնությունը և անհատականությունը: Տնտեսական բարեփոխումները ևս պետք է լինեն գիտակցված գործընթաց, որոնք կլինեն ոչ թե Եվրոպային սիրաշահելու, այլ կբխեն տեղի երկրների սեփական շահերից: Ստացվում է, որ ԵՄ և ԵԽ չափանիշներին մոտարկման այս փուլում չպետք է լինեն լուրջ բացթողումներ՝ փորձելով խուսափել իրավիճակային որոշումների կայացումից:

Ինչ վերաբերում է ԵՄ վերաբերմունքին Հարավային Կովկասի երկրներից յուրաքանչյուրին, ապա պետք է նշել, որ սա ևս կարևոր հանգամանք է՝ պարզել, հասկանալ, թե արդյոք ԵՄ գտել է իր համար հենարան երկիր մեր տարածաշրջանում, որին կառաջարկեր արտոնյալ համագործակցության որակապես այլ տարբերակ, թե բոլոր երկրներին հավասարաչափ է վերաբերում: Ինչպես ավելի վաղ ենք նշել, Վրաստանն ամեն ինչ անում էր և անում է ԵՄ և Եվրոատլանտյան կառույցների աչքերում հարավկովկասյան տարածաշրջանում «հենարան երկիր» համարվելու համար, սակայն այս հարցում վրացական պետությունը դեռևս շատ առաջ չի գնացել: Ըստ էության, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է ասել, որ ԵՄ Հարավային Կովկասը դիտում է իբրև մեկ միասնական տարածաշրջան, և ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի բովանդակությունը Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի նկատմամբ տարբերվում են միայն երկրների առանձնահատկություններով: ԵՄ հիմնական ծրագրերը (ՏՐԱՍԵԿԱ, ԻՆՕԳԵՅԹ, ՏԱՍԻԱ) վկայում են այն մասին, որ ԵՄ Հարավային Կովկասում հետապնդում է հիմնականում էներգետիկ անվտանգության շահեր: Այս տեսանկյունից շատ կարևոր է դառնում պատասխանել այն հարցին, թե արդյոք Հարավային Կովկասին կտրվի հնարավորություն միանալ եվրոպական ընտանիքին՝ նախնառաջ տնտեսական, այսինքն էներգետիկ պաշարներից ելնելով, թե անվտանգության նկատառումներով՝ Եվրոպայի ապահովությունը Մերձավոր Արևելքի անհանգիստ հարևաններից ամրապնդելու համար: Թե առաջին, թե երկրորդ դեպքում մեծանում է Հարավային Կովկասի նշանակությունը՝ որպես պոտենցիալ կամուրջ դեպի Մերձավոր Արևելք: Սակայն, հաշվի առնելով Մերձավոր Արևելքի ներկայությունը, հնարավոր է՝ Հարավային Կովկաս-ԵՄ հարաբերություններն ինտեգրվելու աստիճանի չզարգանան և չխորանան: Նման ելքից խուսափելու համար անհրաժեշտ է, որ հարավկովկասյան երկրներն անեն ամեն ինչ՝ որպես օգնության հասցեատեր կամ ընդլայնումից շահող միակ կողմ չընկալվելու համար, որը պետք է կուրորեն և հնազանդորեն կատարի բոլոր հրահանգները, որպեսզի կարողանա բարելավվել իր կյանքի որակը և հասցնել այն ԵՄ չափանիշներին:

ԵՄ վերջին մեծածավալ նախաձեռնությունները ("Ընդլայնված Եվրոպա և Նոր հարևանություն", "Եվրոպական հարևանության քաղաքականություն", "Արևելյան գործընկերություն") բարեհաջող և արդյունավետ իրագործելու համար անհրաժեշտ է հստակ սահմանված ուղղությունների ու կառուցակարգերի մշակում: Այս նախաձեռնությունների հետ կապված այսօր հաճախ են խոսում սահմանային առևտրի խրախուսման և հարևաններին աջակցելու համար ֆինանսական կառուցակարգի ստեղծման կարևորության մասին: Տարա-

ծաշրջանային համագործակցությունը, ինչը կարող է բխել վերը շված տնտեսական գործոններից, առանցքային կարևորություն ունի այն հարևանների համար, որոնք ունեն քաղաքական հակամարտություններ կամ կրում են անցյալի իրողությունների ծանր բեռը: "Տարածաշրջանային տնտեսական ամբողջության" ստեղծման ուղիներից մեկն էլ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի "կապվելն է" տնտեսական տարբեր ծրագրերի միջոցով:

Հարավային Կովկասի եվրոպականացման մասին խոսելիս՝ պետք է նկատի ունենալ, որ այս գործընթացում քաղաքականությունն ուղղորդող դերակատարների թվում պետք է տեսնել ոչ միայն ԵՄ, ԵԽ և ԵԱՀԿ, այլ նաև ՆԱՏՕ, քանի որ տարածաշրջանի բոլոր երկրներն ակտիվորեն համագործակցում են Հյուսիսատլանտյան դաշինքի հետ, իսկ, մասնավորապես, Վրաստանը պաշտոնապես բազմիցս հայտարարել է, որ ցանկանում է անդամակցել ՆԱՏՕ: Այսպես, Ա. Ոսկանյանը տարբերում է Հարավային Կովկասի եվրոպականացման երկու մոդել՝ եվրոպական և ամերիկյան, որոնցից երկրորդն եվրոպականցման իմաստը տեսնում է ոչ միայն ԵՄ շրջանակներում պետությունների հետագա զարգացման, այլև առավել ճկուն՝ բոլոր եվրոպական երկրներն ընդգրկող միավորման կառուցման մեջ, որի հիմքում ընկած կլինեն անդամակցությունը ՆԱՏՕ և համատեղ պայքարը միջազգային սպառնալիքների դեմ: Այսինքն, երկրորդը՝ ամերիկյանը, ինտեգրման, եվրոպականացման առավել ամբողջական, համընդգրկուն գլոբալ մի ուղի է, որի դեպքում ԵՄ դիտարկվում է այդ ընդհանուր գործընթացի հավաքական մասնակիցներից մեկը և, ըստ ամենայնի, կորցնում հավաքագրող, խթանող, եվրոպականացման գործընթացը վերահսկող միակ կենտրոնի իր կարգավիճակը:

Եթե հաշվի առնենք վերը նշված բոլոր այդ կազմակերպությունների (ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ) որդեգրած քաղաքականությունը Հարավային Կովկասում, ապա իսկապես կտեսնենք, որ առկա է թե աշխատանքի բաժանում, թե մասնակի համընկնում ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ կողմից գործադրվող ժողովրդավարացման ջանքերում: Դժվար է գտնել մի դեպք, երբ սկզբունքային կարևորություն ունեցող հարցերում այս կազմակերպությունների պաշտոնական տեսակետները հակադրվել են միմյանց Հարավային Կովկասի տարածաշրջանում, ընդհակառակը, նրանք, կարծես, լրացնում են մեկը մյուսի աշխատանքը: Հարավկովկասյան երեք երկրներն էլ հանդիսանում են ԵԱՀԿ և ԵԽ անդամներ, մասնակցում են ԵՄ տարածաշրջանային գրեթե բոլոր նախագծերին և ներգրավված են ՆԱՏՕ PFP, PARP և IPAP ծրագրերին: Ակնհայտ է, որ բոլոր երեք երկրների արտաքին քաղաքականության օրակարգում առանձնակի տեղ է հատկացված հիշյալ կազմակերպությունների հետ համագործակցությանը,

բոլորն էլ հետապնդում են այս կամ այն չափի ինտեգրման նպատակ եվրոատլանտյան կազմակերպություններին, սակայն նրանց մարտավարությունները նույն նպատակին հասնելու համար կարող են տարբեր լինել՝ պայմանավորված ներքաղաքական և արտաքին քաղաքական հանգամանքներով: Այսպես, Վրաստանն ու Ադրբեջանը հայտարարել են, որ ՆԱՏՕ-ին միանալն իրենց արտաքին քաղաքականության օրակարգի անքակտելի մասն է, մինչդեռ Հայաստանն այս հարցում դրսևորում է առավել հավասարակշիռ մոտեցում:

Դա պայմանավորված է ՌԴ-ի և ՀԱՊԿ-ի հետ ՀՀ դաշնակցային հարաբերությունների հանգամանքով: Չնայած սրանց, հարկ է նշել, որ պաշտոնական Երևանը ակտիվ գործարկում է նաև ՆԱՏՕ-ի հետ: Նույնը կարող ենք ասել նաև ԵՄ հետ հարաբերությունների վերաբերյալ: Վրաստանն օր առաջ ցանկանում է դառնալ ԵՄ անդամ. Թբիլիսիի փողոցներում ամեն քայափոխի հնարավոր է տեսնել վրացական պետական դրոշի կողքին կախված նաև ԵՄ կապույտ դրոշը, մի խոսքով, այստեղ շատ բան է արվում հասարակությանը պատրաստելու, նրան տեղեկատվությամբ ապահովելու, եվրոպական արժեքները տարածելու համար: Այս հարցում ավելի պասիվ են Հայաստանն ու Ադրբեջանը: Նրանցից ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության մեջ ընդհանրապես բացակայում է ԵՄ անդամ դառնալու քաղաքական ուղեգիծը. Այստեղ ասվում է, որ անհրաժեշտ է ավելի խորացնել համագործակցության ներկայիս մակարդակը ԵՄ և մյուս եվրոպական կառույցների հետ :

Ադրբեջանն իր հերթին լիովին այլ կերպ է դրսևորում իրեն եվրոատլանտյան կառույցների հետ հարաբերություններում. Այստեղ կարծիք է ձևավորված, որ իրենց երկիրը համարվում է նոր Եվրոպայի բաղկացուցիչ մասը՝ միևնույն ժամանակ լավ հասկանալով, որ Արևմուտքի հետաքրքրություններն Ադրբեջանի նկատմամբ մեծապես պայմանավորված են վերջինիս էներգետիկ պաշարներով: Այս հանգամանքից օգտվելով՝ Ադրբեջանը հսկայական ծավալներով արտահանում է իր էներգետիկ ռեսուրսները, կուտակում է ֆինանսական մեծ միջոցներ, վերազինում է բանակը, պարբերաբար հանդես է գալիս ՀՀ դեմ ուղղվե.ց ռազմատենչ հայտարարություններով՝ այդ կերպ ցանկանալով տարածաշրջանում գերիշխող դիրքի հասնել: Նման քաղաքական վարքագիծն ամենևին չի տեղավորվում տարածաշրջանային համագործակցության ցանկացած ձևաչափի մեջ: Ըստ էության, Ադրբեջանը գերագնահատում է իր էներգետիկ խաղաթղթերը, որովհետև դրանց առկայության պայմաններում ևս բազմիցս արժանացել է եվրոպական կառույցների քննադատությանը՝ ժողովրդավարության հետ կապված խնդիրներ ունենալու պատճառով:

Եվրոպականացման գործընթացը շատ ջանքեր, ժամանակ և քաղաքական կամք է պահանջում: Այն չի կարող ամբողջովին սահուն լինել, որովհետև բացի այն, որ անհրաժեշտ է ներգրավվող երկրների մեծ պատրաստակամություն արդյունավետություն ապահովելու համար, պետք է հաշվի առնել նաև տարածաշրջանի երկու հզոր հարևանների՝ Իրանի և ՌԴ վերաբերմունքն այս հարցին, քանի որ հատկապես վերջինի դիրքորոշումը կարող է իր կնիքն ունենալ ընդհանուր գործընթացի վրա: Եվրոպականացումը դեռևս Հարավային Կովկասում խիստ շոշափելի արդյունքներ չի տվել, քանի որ դրանից օգուտներ ստացվում են բավականին ուշ ժամանակահատվածում: Ինչպես հայտնի է, Հարավային Կովկասի եվրոպականացման վրա էական բացասական ազդեցություն ունեն չկարգավորված հակամարտությունները: Այստեղ ևս եվրոպականացումը ցուցաբերում է իր "միջնորդությունը", քանի որ կարող է դրական ազդեցություն ունենալ հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա՝ փորձելով իրար մոտեցնել կողմերի անհամատեղելի դիրքորոշումները և ստեղծել հանդուրժողականության մթնոլորտ:

Եվրոպականացման այս գործընթացում արդյունավետություն ապահովելուն պետք է ձգտեն առավելապես այն երկրները, որոնք ունեն ավելի հեռահար նպատակներ՝ ինտեգրվել ԵՄ: Ճիշտ է՝ եվրոպականացումն ուղղակիորեն չի ենթադրում նաև հետագա ինտեգրում, բայց կարող է և ստեղծում է դրա համար լուրջ նախահիմքեր: Չնայած որ ինտեգրման ակտիվ գործընթացներ սկսելու համար պետք է ԵՄ առաջատար երկրների աշխարհաքաղաքական շահերի համընկնում, այնուամենայնիվ, այս երկրներին անհրաժեշտ է հասկանալ, թե իրենք ինչ չափով են ուզում եվրոպական պետություն լինել, որքանով են ուզում պատկանել պետությունների եվրոպական ընտանիքին և ինչ է դա նշանակում իրենց համար:

Որոշ հեղինակների կարծիքով, եվրոպական կառույցներին հետնողական ներգրավվման կուրսը կարող է դրական ազդեցություն ունենալ հարավկովկասյան հասարակությունների համախմբման վրա, եթե այդ երկրներում զարգացման եվրոպական մոդելն ամրպնդվի և դիտվի որպես հասարակական զարգացման անհրաժեշտ ուղղություն: Ի. Կոմիսնան, օրինակ, նշում է, որ հարավկովկասյան երկրներից Ադրբեջանն ունի ամենաքիչ հնարավորությունները ԵՄ անդամակցության համար, քանզի այստեղ, ինչպես և Թուրքիայում, ոչ միայն չեն ապահովվում ժողովրդավարական սկզբունքները, այլև կրոնամշակութային տեսակետից Ադրբեջանը չի կիսում Եվրոպայի քրիստոնեական ժառանգությունը: Առանձին սահմանափակումներ ունի նաև ՌԴ հետ ավանդական ռազմավարական հարաբերություններ ունեցող Հայաստանը, որն ակ-

տիվորեն ներգրավված է հետխորհրդային տարածքում ՌԴ նախաձեռնությամբ իրականացվող ծրագրերին և նախագծերին, ինչպես նաև անդամակցում է ՀԱՊԿ: Այս տեսանկյունից Վրաստանը գտնվում է փոքր-ինչ շահեկան դիրքերում, քանի որ իր կամքից անկախ հայտվեց աշխարհաքաղաքական բարենպաստ դիրքերում անկախացումից հետո: Արցախյան համակարգության առկայությամբ պայմանավորված Վրաստանը կարծես վերածվել է տարածաշրջանում "չեզոք" երկրի, որում գտնվում են գրեթե բոլոր եվրոպական հաստատությունների ներկայացուցչությունները և, ամենակարևորը, այն վերածվել է տարանցիկ/տրանզիտ երկրի, իսկ այդպիսի կարգավիճակն ենթադրում է ֆինանսական հսկայական հոսքերի առկայություն: Վրաստանի՝ որպես տարանցիկ երկրի դերն էլ ավելի բարձրացավ հատկապես "Դարի գործարքի" Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անցկացմամբ, որը, շրջանցելով Հայաստանը, մտավ Վրաստան, այնտեղից՝ Թուրքիա:

Վրաստանն իր հերթին ամեն ջանք գործադրում է Արևմուտքի կողմից եվրոպական պետություն ընկալվելու համար՝ երբեմն պետական բարձրագույն ինստիտուտների մակարդակով բավականին հանրածանոթ փաստաթղթեր ընդունելով: Այսպես, դեռևս 1997թ. Վրաստանի Խորհրդարանն ընդունեց հայեցակարգային մի փաստաթուղթ, որում եվրոպական կառույցների կառուցողական դերը հակադրվում էր ՌԴ "կայսերական" քաղաքականությանը: 1999թ. Շևարդնաձեն վրացական արտաքին քաղաքականության առաջնահերթություն հռչակեց եվրոպական ուղղությունը, իսկ 2003թ. Սահակաշվիլիի իշխանության գալով ԵՄ ու ՆԱՏՕ անդամակցությունը դարձան արտաքին քաղաքականության ռազմավարական նպատակներ:

Հարավային Կովկասի եվրոպականացվածությունը այժմ հիմնականում ինստիտուտված է ԵՖ և ԵԱՀԿ կողմից, իսկ ԵՄ դերակատարությունը դեռևս շատ բարձր մակարդակի վրա չէ, ինչը կարելի է պայմանավորել եվրոպական կառույցների ազդեցության գործիքների և հարավկովկասյան երկրների՝ եվրոպականացման ուղղությամբ տարվող աշխատանքների ցածր արդյունավետությամբ: Մեծամասամբ եվրոպական կառույցները ձգտում են ստեղծել կայուն զարգացման և կանխատեսելիության մթնոլորտ Հարավային Կովկասում, որը հնարավոր է իրականացնել տարածաշրջանային զարգացումները փոխպայմանավորելու միջոցով: Սակայն այս նպատակին հասնելու համար եվրոպացիները ցանկանում են ստեղծել այդքան անհրաժեշտ տարածաշրջանային ուժեղ համագործակցություն:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ չնայած անընդհատ խոսվում է եվրոպականացման անհրաժեշտության մասին՝ որպես արդիականաց-

ման լավագույն միջոցի, այնուամենայնիվ, այդ գործընթացն ամենևին էլ ամբողջապես եվրոպական չէ: Մասնավորապես, Ի Խաչինդրավան նշում է, որ ՀՀ հանդես է գալիս կոմպլեմենտարության դիրքերից, որը դրսևորվում է մի կողմից՝ ՆԱՏՕ և ԵՄ ծրագրերի մեջ մասնակցության աշխուժացմամբ, մյուս կողմից՝ ԱՊՀ և ՀԱՊԿ շրջանակներում երկկողմ և բազմակողմ պայմանագրային հիմքի ամրապնդմամբ: Այսինքն, Հայաստանը ցանկանում է անցնել եվրոպականացման հաջող փորձաշրջան, բայց չի ցանկանում կորցնել ՌԴ բարի վերաբերմունքը: Վրասատնը, որն այդքան կարևորում է իր՝ ՆԱՏՕ և ԵՄ անդամակցելը, իր ռազմավարական գործընկերների թվում չի տեսնում ոչ մեկին, ոչ էլ մյուսին (պաշտոնապես այդ դերը վերապահված է Ուկրաինային, Թուրքիային և ԱՄՆ): Ադրբեջանը հիմնականում իր վարքագիծը պայմանավորում է Թուրքիայում ընթացող զարգացումներով:

Ստացվում է, որ Հարավային Կովկասի երկրներն ոչ միանշանակ ազդանշաններ են ուղղարկում Եվրոպա, բայց պետք է փաստել, որ Եվրոպան ևս աչքի չի ընկնում իր դիրքորոշումների խիստ կոնկրետությամբ, առայժմ կասկածելի է նույնիսկ, թե արդյոք ԵՄ ունի միասնական ռազմավարություն հարավկովկասյան տարածաշրջանի վերաբերյալ: Դա կարելի է կապել ԵՄ ոչ կատարյալ արտաքին քաղաքականության հետ, բացի այդ եվրոպական գիտավերլուծական շրջանակների կողմից երբեմն Հարավային Կովկասն ավելի շուտ որպես մարտահրավեր է ընդունվում, քան թե գործընկեր :

Այսպիսով, եվրոպականացման արդյունավետության նկատելի մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է մի կողմից՝ հարավկովկասյան երկրների առաջնորդների բարձր քաղաքական կամքի առկայություն և պատրաստակամություն, մյուս կողմից էլ՝ եվրոպական կառույցների շահագրգռվածության բարձր աստիճան առկա եվրոպականացման գործիքներում ներգրավվող երկրների ակտիվ մասնակցությունն երաշխավորելու և առաջընթաց գրանցելու համար, քանի որ հենց դրացնից են սպասում իրենց օգուտները տարածաշրջանի երկրները: